

Կ Ա Ր Գ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ  
ՍՏՈՐԵՐԿՐՅԱՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ԱՐՂՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ  
ՋՐԱՀԱՇՎԻՉ (ՋՐԱՉԱՓԻՉ) ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) (այսուհետ՝ ջրաչափիչ սարք) սարքերի տեղադրման հետ կապված հարաբերությունները:

2. Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով ջրաչափիչ սարքը տեղադրում է մակերևութային, ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործողը և արդյունահանողը (այսուհետ՝ ջրօգտագործող) կամ մասնագիտացված կազմակերպությունը, ընդ որում, սարքի ձեռքբերման, տեղադրման, շահագործման և սպասարկման ծախսերը կատարում է ջրօգտագործողն իր միջոցների հաշվին:

3. Ջրաչափիչ սարքը ջրի հոսքը, քանակը չափող և այդ տվյալների հեռավար փոխանցման, ցուցադրման և արխիվացման հնարավորությամբ օժտված սարք է (ջրաչափիչ սարքերի ցուցմունքի սխալանքը՝ մինչև 2 տոկոս), որի միջոցով հնարավոր է առնվազն հինգ թույլ պարբերականությամբ փաստացի ջրառի տվյալների առցանց փոխանցման միասնական հարթակին (այսուհետ՝ հարթակ) տրամադրել (փոխանցել) ջրի հոսքի, քանակի վերաբերյալ տվյալներ: Ջրաչափիչ սարքը պետք է հագեցած լինի տեղորոշման և բջջային օպերատորի սիմ-քարտի օգտագործման մոդուլի հնարավորությամբ:

4. Ջրօգտագործողը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ բնօգտագործման

վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառումը վարում է սույն կարգին համապատասխան տեղադրված ջրաչափիչ սարքերի ցուցմունքով: Բնօգտագործման վճարներ չվճարողները ևս օգտագործված և արդյունահանված ջրի փաստացի ծավալների հաշվառումը վարում են սույն կարգին համապատասխան տեղադրված ջրաչափիչ սարքերի ցուցմունքով:

5. Մակերևութային ջրերի օգտագործման դեպքում ջրաչափիչ սարքը տեղադրվում է ջրառի կետում ուղիղ հարթության վրա գտնվող խողովակի՝ ամբողջությամբ ջրով լցված կամ բաց հունով ջրանցքի վրա:

6. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման դեպքում ջրաչափիչ սարքը տեղադրվում է անմիջապես ջրառի կետից դուրս եկող և ամբողջությամբ ջրով լցված խողովակի վրա:

7. Էկոլոգիական թողքի հաշվառման համար ջրաչափիչ սարքը տեղադրվում է ջրառի կետից անմիջապես հետո գետի հունում, այնպես, որ հնարավոր լինի ամբողջությամբ հաշվառել էկոլոգիական թողքի ծավալը:

8. Ջրաչափիչ սարքը ջրառի կետում պետք է տեղադրված լինի այնպես, որ հնարավոր լինի չափել խողովակով կամ բաց հունով ջրանցքով արտամղվող ջրի ամբողջ ծավալը:

9. Մինչև ջրաչափիչ սարքն ընկած հատվածում պետք է բացառվի խողովակին կամ բաց հունով ջրանցքին միացված որևէ խողովակի կամ բաց հունով ջրանցքի առկայությունը կամ խողովակին, բաց հունով ջրանցքին որևէ խողովակի, բաց հունով ջրանցքի միացման հնարավորությունը: Ջրաչափիչ սարքը պետք է տեղադրված լինի տեսանելի հատվածում և լինի հասանելի՝ դրա կնքման համար:

10. Մակերևութային, ստորերկրյա քաղցրահամ ջրերի նույն ջրառի կետից մեկից ավելի նպատակներով ջրօգտագործում իրականացնելու դեպքում, ջրաչափիչ սարքը տեղադրվում է ջրառի կետից դուրս եկող առանձնացված յուրաքանչյուր խողովակի կամ բաց հունով ջրանցքի վրա: Ջրառի կետից մինչև խողովակների կամ բաց հունով ջրանցքների առանձնացման տեղը (հանգույցը) կամ մինչև առաջին առանձնացված խողովակը կամ բաց հունով ջրանցքն ընկած

հատվածում կամ առանձնացված խողովակների կամ բաց հունով ջրանցքների միջև ընկած հատվածներում պետք է բացառվի խողովակին կամ բաց հունով ջրանցքին միացված որևէ (բացառությամբ սույն կարգին համապատասխան ջրաչափիչ սարքի) խողովակի կամ բաց հունով ջրանցքի անկայությունը կամ խողովակին, բաց հունով ջրանցքին որևէ խողովակի կամ բաց հունով ջրանցքի միացման հնարավորությունը: Առանձնացված խողովակների կամ բաց հունով ջրանցքների ջրաչափիչ սարքերը պետք է տեղադրված լինեն տեսանելի հատվածներում և լինեն հասանելի՝ դրանց կնքման համար:

11. Ջրաչափիչ սարքի միջոցով փոխանցում են ջրի հոսքի և քանակի վերաբերյալ տվյալները լ/վրկ կամ մ<sup>3</sup>/վրկ, մ<sup>3</sup>/օր կամ մ<sup>3</sup>/տարի ձևաչափերով:

12. Ջրաչափիչ սարքը պետք է ապահովված լինի ինտերնետային հասանելիությամբ և անխափան կապ հաստատի հարթակի հետ: Ինտերնետային հասանելիության բացակայության և/կամ ջրառի կետում տեղադրելու անհնարինության դեպքում ջրօգտագործողը պարտավոր է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված ինտերնետային ծառայություն մատուցող կամ ջրաչափիչ սարքը տեղադրող կազմակերպության (կազմակերպությունների) կողմից տեղեկանք՝ տվյալ տարածքում ինտերնետային անհասանելիության կամ ջրառի կետում տեղադրելու անհնարինության վերաբերյալ՝ առաջարկելով ջրաչափիչ սարքի տեղադրման այլընտրանքային վայր: Լիազոր մարմնի համաձայնությամբ ջրաչափիչ սարքը կարող է տեղադրվել այլընտրանքային վայրում՝ ապահովելով ջրի ամբողջական և ճշգրիտ հաշվառումը:

13. Ջրաչափիչ սարքը տեղադրելուց հետո մինչև N 2 հավելվածով սահմանված կնքումն իրականացնելը, ջրօգտագործողը կամ ջրաչափիչ սարքը տեղադրող կազմակերպությունը պարտավոր է լիազոր մարմնին տրամադրել անհրաժեշտ բնութագրիչները՝ ջրաչափիչ սարքի կապը հարթակին ապահովելու համար:

14. Ջրաչափիչ սարքի պահպանության և անխափան աշխատանքի ապահովման պատասխանատվությունը կրում է ջրօգտագործողը:

15. Ջրաչափիչ սարքի կամ դրա օժանդակ մասերի վերանորոգման կամ փոխարինման աշխատանքների մեկնարկից առաջ ջրօգտագործողը դրանք համաձայնեցում է լիազոր մարմնի հետ:

16. Ջրաչափիչ սարքը պետք է ունենա «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով ստուգաչափման (չափագիտական վկայագրման) դրական արդյունքներ, որոնք պետք է վավերացված լինեն ստուգաչափման միջոցի արտատիպով չափման միջոցի վրա և (կամ) անձնագրի վրա և (կամ) պետք է տրված լինի ստուգաչափման մասին վկայական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ